հանքի վերակացու Ղազար անուն ունեմն, ծառայի հանգուցեալ Մէլիք Սահակի, մին թուման, մին չախու և մին ծաղկեաց փեշկիր, որ մինչ ետու նմա նշան այնր քարին երեր զանազան տեսակ քարինս ի պղնձոյ մատանիցն, և ես բաղում տքնութեամբ ի գլուխ հասուցի լաւն, որոյ դրամն հինգ ոսկով, 10 դրամ ետու Թեքիրտաղու Առաքել եպիսկոպոսին, որ 100 դրամ խնդրեաց յինէն, 10 ետու վասն ոչ պակասելոյ մերն. և շատ փոշման եմ, որ ոչ ետու նմա հարիւրի կէսն ինչ և իցէ՝ վասն բաղումն դատանելոյ կորուսի այն ժամանակին զմինն, որ գտի բաղումն. դեռ ես՝ կորուսանում եմ վասն զանազան բանիցն հնարս դատանելոյ, և յուսամ թէ դատանէմ. որպէս վասն Ղրմզին, թէ որ չափ եմ կորուսեալ, ինձ է յայտնի և գտի վասն բաղմաց զմեծագին մատանին, որ վայելեալ օրհնեմ զտուողն ամենայն բարութեանց և զանգին կեանս նոցին, որ կամեցան դիս վարձատրել. եթէ օգնէք ինձ այժմ, և Ձեզ ես օրհնեմ ընդ տուողին բարութեանցն ամենից։ Եմ և մնամ վասն ընդհանրական կառավարութեան Ձերոյ ըստ ամենայնի հնազանդ ծառայ Ձեր և սրբոյ Գահոյս՝

Ծաղկաձորդ Իսահակ եպիսկոպոս Մահտեսի տէր Գրիգորեան Երևանցի

Համար 60։
1837 յունիսի 23
ի Սբ. Էջմիածին։

Վասն թղթահանութեան, նոր տեսակ չարխ մի թեթև ձևով թէ կամիք, շնորհեցէք հրաման ըստ նմանութեան Ջահրայի կամ նման չղրեխի շինել տամ և բանեցնող նորին պատրաստի ունիմ քեալաշ Յակոբ, որ ձեռամբ պտտելով բանի դինկն։ Ըստ պատմութեան աղա Յակոբ Շահան Ջրպետեանին որ ասաց ցիս, մինչ էի ի քաղաքի անդ ի Տփխիս՝ թէ Փարէժ քաղաքումն ոչ գոյ մուրացիկ բնաւ. ամենայն ոք թէ կոյր, թէ կաղ թէ անդամալոյծ և այլ այնպիսիք են ընդ իշխանութեամբ և գործեն իւրաքանչիւրն զանազան գործս վարձով, թէ այր և թէ կին, որոյ տպեալ գրքէն ունիմ օրինակեալ այժմ պատրաստի վասն տեսութեան հարկաւոր անձանց յաղագս գործ դնելոյ մերս աշխարհի կոյրքն, կաղքն և այլքն վասն փառաց տեառն պարծանք աշխարհի և տերութեան, և վասն ոչ տալոյ ձանձրութիւն ժողովրդոցն, որ դանէ ի դուռ մուրացկան լինելով, ամաչեն ինքեանք և ամաչեցուցանէն նոցա որ ոչ կամին տալ ողորմութիւն. և նոքա արանջալով շրջեն ասա և անդ. եթէ այնպիսեացն այպէս ծառայութեան մէջ կացուցանել լինի, մեծ ողորմիւն է համարելոյ, որ ոչ շրջեն և ոչ տիրասէրքն ինաս տան այնպիսեացն. Այսքանս Ձերդ սրբազանութեան բաւեսցի վասն օգտի և պարծանացն սրբոյ Գահոյս։

Ա.Ծ.Ծ. Խ. Ե

3

Սրբազան Սիւնհոդոսի լուսավորչեան Աթոռոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի. ի Ծաղկաձորդ Իսահակայ եպիսկոպոսէ Մահտեսի Տէր Գրիգորեան Երևանցւոյ

Ամենախոնարհ խնդիր,

Յաղագս բազմահրաշ օգտաւետութեանցն ասեմ, զոր խնդրամատոյց եղէ երկիցս անգամ.—Առեք հինգը լիտր Ղալատաշի վասն պատաշին. կամ երեք լիտր լաւն, որ ճանաչէ Բօյաղչին։

Հինգ լիտր լաւ սպիտակահատ ցորեան ջրովի և ոչ դէմի. վասն նշշտային։ Երեք կտոր կարմիր պղինձ. վասն դալամի ժանկառին, որ ամէն մին կտորն մի ձեռաց չափ լայնութիւն ունենայ, նոյն չափովն երկայնութիւն լիցի. թանձրութիւնն՝ մուխաւայի նման լինի. և վասն սորա երեք չարեք թունդ քացախ. և մին լայնաբերան բղուղ վասն քացախին. թէ լայնաբերան շիշայ լինէր երեք հատ առաւել ևս լաւ էր. յաղագս յօրինելոյ զժանկառն։

Մէկ խտիլ ձկան սոսինձ սպիտակն, որ ասէն պալխ թուխալի. վասն կոնդակաց կցանին։

Սոցա որն ասա գտանի տուք ինձ, և որն ոչ գտանի, Երևանու բերել տուէք։

Յաղագս կապոյտ և կանաչ քարանցն ասեմ, որ ելանէ ի հանքս պղնձոյ՝ որոց օգուտն գեր ի վերոյ է թէ սրբոյ Աթոռոյս և թէ՝ վասն բազմաց, որոց փորձն գիտեմ շնորհիւն աստուծոյ լուացուցանելոյ և պիտոցուցանելոյ։